ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ-ԱՄԱՀ-ՄԱԾՁԲ-20/18

<<14>> 04 2020թ.

Արմենավանի համայնքապետարան, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, ի դեմս համայնքի ղեկավար Ս. [illegible], մի կողմից և <<Գործընթաց>> ՍՊԸ-ն, այսուհետ՝ <<Կատարող>>, ի դեմս տնօրեն Ինարա Դանիելյանի, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ , կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Համաձայն սույն պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է <<Գործընթաց>> ՍՊԸ խմբագրության կողմից իրականացնել <<Գործընթաց>> թերթի բաժանորդագրություն, այսուհետ՝ <<Ապրանք>>, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ապրանքի դիմաց:
2. Ապրանքների մատակարարման ժամկետն է՝ 14.04.20 մինչև 31.12.20 թ.-ը:
3. Կատարողը պարտավոր է ապահովել ապրանքների պատշաճ որակ, իսկ չհամապատասխանելու դեպքում անմիջապես վերադարձնել կամ փոխել:
4. Սույն պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար Կատարողը պարտավոր է Պատվիրատուին պատվիրված ծրարով կամ անմիջականորեն ներկայացնել բաժանորդագրության քարտ, այլ փաստաթղթեր անհրաժեշտ վճարում կատարելու համար:
5. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին հաղորդել ճշգրիտ տեղեկություններ իր հասցեի, բաժանորդագրության ժամկետի և թերթերի քանակության մասին, առնվազն 5/հինգ/ օր առաջ տեղյակ պահել հասցեի փոփոխության մասին:
6. Պատվիրատուն պարտավոր է անպատշաճ որակի, ոչ ճշգրիտ քանակի, ոչ հերթական համարի կամ թերթի հրապարակման ամսաթվից անժամանակ ուշացված թերթի ստացման դեպքում հեռախոսով (Հեռ.՝ 091767391) ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրում կամ գրավոր (ստորագրությամբ)՝ ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրում այդ մասին տեղյակ պահել << Գործընթաց>> ՍՊԸ-ի խմբագրությանը:
7. Ապրանքի արժեքը կազմում է՝ 4800 (չորս հազար ութ հարյուր) դրամ:
8. Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է փոխանցումով կամ կանխիկ, միանվագ կամ ըստ ամիսների համամասնորեն մինչև ամեն հաջորդ ամսվա 10-ը, իսկ նախորդ տարվանից (-ներից) պարտքի առկայության դեպքում, այն պետք է վճարվի ոչ ուշ, քան 30.04.2020թ.-ը:
9. Սույն պայմանագրով վճարային պարտավորությունները սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել տույժ՝ վերջինիս կողմից չվճարված գումարի 1(մեկ) տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:
10. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը կրում են պատասխանատվություն հասցված իրական վնասի չափով:
11. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
12. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող
<<Գործընթաց>> ՍՊԸ՝
Լրատվական գործունեություն իրականացնող
Հասցեն՝ ք. Երևան, Ավան, Թումանյան թաղ. 7/2-24
Հեռ. /010/613440,/091/767391
ՀՎՀՀ 00650414
Հ/h 160420153415
<<ՎՏԲ-Հայաստան>> բանկի խորհրդ.մ-ճյուղ

Տնօրեն ____________ Ինարա Դանիելյան

Կ.Տ.

00650414 «ԳՈՐԾԸՆԹԱՑ» «ГОРЦНТАЦ» «GORTSNTATS»

Պատվիրատու
Արմենավանի համայնքապետարան
Հասցե ՀՀ Արմավիրի մ., գ. Արմենավան
ՀՎՀՀ 06954104
Հ/h 900252101390, ՀՀ ՖՆ գործառն. վարչություն
համայնքի ղեկավար Ս. [illegible]

Կ.Տ.